ԱՀ-13765

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«06» 10 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0177-23

Ձեռնարկողը՝ ***«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ***
ք.Երևան,Ս.Վրացյան 73

Գործունեությունը՝ ***«Վանաձորի Ս.Նալչոռանյանի անվան № 13 ավագ դպրոց» ՊՈԱԿ***
Լոռու մարզ, Վանաձոր համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0177-23

«06» 10 2023թ.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի կողմից ներկայացված, Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Ս.Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի» վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ներածական մաս. Գործունությունը նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Վանաձոր համայնքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ն:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032015-06-0008 վկայականը, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքապետարանի կողմից 18.01.2023թ. տրված № CPPO-000-4486 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրաունքի տեսակը՝ անհատույց օգտագործում, հողամասի ընդհանուր մակերեսը՝ 1.135 հա:

Նկարագրական մաս. Վերականգնման ենթակա դպրոցը գտնվում է գտնվում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

Լոռու մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում: Լոռու մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.8 %-ը: Վանաձոր քաղաքը Լոռու մարզկենտրոնն է, գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում՝ Փամբակ գետի հովտում, հյուսիսից շրջապատված է Փամբակի և Բազումի լեռներով: Զբաղեցնում է 2599.33 հա մակերես: Զբաղեցրած տարածքի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է 1353 մ: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1350մ է, կառուցապատված տարածքի բարձր կետը 1490մ է:

Քաղաքն ունի մեղմ, բարեխառն կլիմա: Վանաձորի տարածքի կլիմայական պայմաններին բնորոշ է չափավոր, տարվա բոլոր եղանակներին համեմատաբար խոնավ կլիման: Տարեկան

տեղումների ընդհանուր քանակը կազմում է 600-700 մմ, և այդ տեսակետից այս շրջանը հանրապետությունում զբաղեցնում է առաջին տեղերից մեկը:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տվյալ տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները:

Դպրոցական համալիրը կառուցվել է 1974թ., որը բաղկացած է թվով երեք մասնաշենքերից, որոնցից երկու ուսումնական (թիվ 1 և 2) մասնաշենքերը իրարից գտնվում են 18,3 մ հեռավորության վրա, իսկ 2-րդ մասնաշենքը 3-ից (մարզադահլիճ) 17,1 մ հեռավորության վրա է և բոլոր մասնաշենքերը իրար հետ կապված են տաքանցումով: Դպրոցական համալիրը տեղակայված է միջին թեքությամբ ռելիեֆի վրա:

Սույն նախագծով նախատեսվում է դպրոցական համալիրի առաջին, երկրորդ, մարզադահլիճային և տաքանցումային մասնաշենքերի վերակառուցում: Այդ թվում դպրոցական համալիրի ուսումնական մասնաշենքերի չորրորդ հարկի, ինչպես նաև առաջին մասնաշենքի վթարային վիճակում գտնվող թվով երեք առանցքներով աջակողմյան հատվածամասի 1-4 հարկերի կազմաքանդումը: Առաջին և երկրորդ ուսումնական մասնաշենքերը իրար կապող տաքանցումային մասնաշենքը նախատեսվում է եռահարկ, ապահովելու սակավաշարժուն խմբերի աշակերտների հասանելիությունը բոլոր հարկերում:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

- Հողամասի մակերես 1,1350հա
- Կառուցապատման մակերես՝ 4800քմ
- Օժանդակ ենթակառուցվածքներ, ոչ ջրաթափանց մակերեսները՝ 1645քմ
- Կանաչապատման գոտու մակերեսը՝ 4920քմ
- Բարեկարգվող գոտու մակերեսը՝ 9632,5 քմ

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Դպրոցի ներքին հարդարման՝ աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից: Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն՝ ապահովող և այլ հարմարեցված լուծումներին:

Նախագծվող դպրոցի Ջրամատակարարման և ջրահեռացման գործնթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի և կանոնների (ՇՆԿ) ու «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված (20.02.2023թ. № ՎՋ533/2023) տեխնիկական պայմանների համաձայն, այն է ջրամատակաարումն կիրականացվի Ուսանողական փողոցով անցնող 125 մմ, P=1.5մթն. ճնշումով պոլիէթիլենային քաղաքային ջրագծից, իսկ ջրահեռացման գործընթացը նույն տարածքով անցնող d=400մմ կոյուղագծով:

Ջրամատակարարման ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային բարձր ճնշման (Փ20-50) և պողպատյա խողովակներից (d=80մմ): Խրամուղու մեջ խողովակները անցկացվում են 1.2մ խորության վրա՝ ավազի նախապատրաստական շերտերով:

Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է 2,64լ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը 2.5լ/վրկ (2 շիթ):

Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել ինքնահոս Φ150 մմ տրամագծի պոլիէթիլենային բարձր խտության ծալքավոր խողովակներով: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են դիտահորեր: Հորերը կլոր հատվածքի են, հավաքովի ե/բ էլեմենտներից 1000-ից ոչ պակաս տրամագծով:

Ոռոգումը կիրականացվի նոր ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի քաղաքային ոռոգման համակարգին:

Դպրոցի տարածքում արտաքին ոռոգման համակարգ նախատեսվում է կառուցել կանաչապատվող տարածքները ոռոգելու համար:

Գազամատակարարման և էլեկտրասնուցման արտաքին ցանցերի իրականացումը (միացումները) կատարվում են անմիջապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող դպրոցի կարիքները: Տեխնիկական պայմաններ չկան: Արտաքին գազատարի միացման տեղը և պայմանները չեն փոխվում:

Ջեռուցման, օդափոխության և էլեկտրամատակարման նախագծերը իրականացվել են համաձայն ՀՀ-ում գործող նորմաների և կանոնների: Նախատեսված է դպրոցի տարածքում գոյություն ունեցող նախկին ենթակայանի տարածքը վերափոխել կաթսայատան, որտեղ տեղադրվում են արտասահմանյան արտադրության բնական գազի այրմամբ 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 265 կվտ հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման մեխանիկական դրդմամբ ռեկուպերատորների կիրառմամբ համակարգեր: Վերոհիշյալ համակարգերում արտածումն իրականացվում է արհեստական եղանակով, որի օդը մտնում է ռեկուպերատորային ագրեգետ, տաքացնում է ներածվող օդը խառնման միջոցով, այնուհետև դուրս է մղվում արտաքին միջավայր:

Քիմիայի և կենսաբանության դասարաններում նախատեսված են քարշիչ պահարաններ: Սանհանգույցներից, դասարաններից օդի արտածումն իրականացվում է բնական եղանակով:

Վերակառուցման աշխատանքների տևողությունը գնահատվում է 26 ամիս: Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների միջին թիվը հաշվարկվել է 40 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմը 10 մարդ, բանվորներ՝ 25 մարդ, մեքենավարներ, օգնականներ և այլ աշխատողներ 5 մարդ:

Դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից:

Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից:

Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները, մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

Շինարարական աշխատանքների ընթացքում՝ ըստ աշխատանքային նախագծի, գնահատվում են ստորև ներկայացվող ծավալները

- Փորվող գրունտ 5979 խ.մ
- Հետլիցք 3629 խ.մ
- Լրացուցիչ բերվող գրունտ 738 խմ

5979 խմ ծավալով հանույթը ժամանակավոր կկուտակվի հրապարակում նախապես հատկացրված տեղերում: Հետլիցքի համար նախատեսվող հողային զանգվածը կպահպանվի 3 մ-ը և 34° անկյունը չգերազանցող կույտերի տեսքով և շինարարական պաստառներով ծածկված վիճակում:

Հողային աշխատանքների ընթացքում լրացուցիչ հանույթը կմատակարարվի՝ լիցենզավորված մատակարարներից պահպանելով ՀՀ-ում գործող օրենքները: Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է շուրջ 5 ամիս:

Շինարարական աղբը, որի ծավալը կանխատեսվում է՝ 1961,7 խմ շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով: Վանաձորի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի համաձայն շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել համայնքից 10 կմ հեռավորության վրա տեղակայված անօգտագործվող տարածք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Սույն նախագծով նախատեսվում է տեղանքի՝ բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող ծառերի (14 հատ) տնկում, մասնավորապես,

- Բարդի 4 հատ
- Գնդաձև ակացիա 10 հատ:

Կանաչապատ մակերեսում կիրականացվի նաև սիզամարգեր: Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի նոր ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի քաղաքային ոռոգման համակարգին: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ) որոշմամբ բնակավայրերի՝ կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- Առաջին հարկից վերև ներսում քանդման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն աղբահան խողովակներ,
- Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով
- Պնևմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց
- Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով
- Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը չի թույլատրվում
- Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնեցման մեջ նշված ժամերով

- Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու
- Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով
- Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից
- Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները
- Ցուցապաստառների, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթևեկության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով
- Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի

Ավագ դպրոցի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված մշտադիտարկումներ, որոնք ներկայացված է Հայտում:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններն, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աշտարակ համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Ներքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Ավագ դպրոցի վերակառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի»

N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:

7. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից ներկայացված, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ն.Սիսակյանի անվան 5 ավագ դպրոցի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Միքայել Սարոյան